ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 253

12 հուլիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 8-ի թիվ 47 և 48 որոշումները. *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Սառնաղբյուր/, հողամասերի աճուրդ վաճառքն անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մադաթյան 2):
2. Աճուրդի անցկացման մասին տալ հայտարարություն <<Հայաստանի Հանրապետության>> օրաթերթում և զանգվածային լրատվության այլ միջոցներում:
3. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2021 թվականի հուլիսի 12
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12–Ի N 253 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ) ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2021 թվականի օգոստոսի 13-ին ժամը 12:00–ին, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մադաթյան 2):

Լոտ 1. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց 8-րդ նրբանցք 4/4 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասում առևտրի սրահ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-100-0045-0010) 0.0064 հեկտար հողատարածք: Հողատարածքի մեկնարկային գին է սահմանվել 21568 (քսանմեկ հազար հինգ հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2021 թվականի օգոստոսի 9-ը ժամը՝ 18:00:

Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12–Ի N 253 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ) ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2021 թվականի օգոստոսի 17-ին ժամը 12:00–ին, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մադաթյան 2):

Լոտ 2. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց 8-րդ նրբանցք 4/5 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասում առևտրի սրահ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-100-0045-0011) 0.00512 հեկտար հողատարածք: Հողատարածքի մեկնարկային գին է սահմանվել 17255 (տասնյոթ հազար երկու հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2021 թվականի օգոստոսի 13-ը ժամը՝ 18:00:

Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**